ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

«Մեղրի համայնքի Նոնաձորի պղինձ-ոսկեբեր հանքերևակման սահմաններում 2025-2028թթ. ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման Ծրագրի՝ ՇՄԱԳ հաշվետվության» վերաբերյալ առաջին հանրային քննարկման

ՀՀ Սյունիքի մարզ Մեղրի համայնք գ. Նոնաձոր Փ. 2, Փկղ. 2 , Շ. 6 *17. 02. 2025թ*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով և Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի՝ 2025 թ. փետրվարի 17-ին՝ ժամը 14:00-ին, Մեղրի համայնքի Նոնաձոր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «ՆԱՐԻՊՐՈՖ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նոնաձորի պղինձ-ոսկեբեր հանքերևակման սահմաններում 2025-2028թթ. ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման Ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության (ՇՄԱԳ հաշվետվություն) վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Հանրային քննարկումը վարում էր Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը: Ներկա էին Նոնաձորի վարչական ղեկավարը, բնակիչները, «ՆԱՐԻՊՐՈՖ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:
Այս քննարկումը կարևոր է համայնքի համար՝ թե՛ տնտեսական, թե՛ բնապահպանական առումով, իր բացման խոսքում նշեց համայնքի ղեկավարը և խոսքը փոխանցեց "ՆԱՐԻՊՐՈՖ" ՍՊԸ-ի կողմից երաշխավորված անձ, երկրաբան Գագիկ Գևորգյանին:

Գ. Գևորգյանը նշեց, որ «ՆԱՐԻՊՐՈՖ» կազմակերպությունը գործունեություն է իրականացրել տարբեր օբյեկտներում՝ սկսած 2012 թվականից: Նոնաձոր բնակավայրում, հաշվի առնելով լեռնային կտրտվածքն ու բարդ պայմանները, նախկինում կատարվել են մետաֆիզիկական և երկաքիմիական աշխատանքներ: Մշակումն իրականացվել է մակերեսից, որոշ չափով կատարվել են նաև մի քանի փորվածքներ:

Նախկինում ևս իրականացվել են փորվածքներ, որտեղ մշակման աշխատանքներ են կատարվել: 2019 թվականից ընկերությունը վերսկսել է ուսումնասիրման գործողությունները՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ: Աշխատանքներն իրականացվելու են հատուկ նկարահանող սարքերի միջոցով, որոնք ֆիքսում են տվյալները և հնարավորություն տալիս մանրազնին ուսումնասիրելու տարածքը: Այս տեխնոլոգիաները հայտնաբերում են պղնձի և ոսկու երակները, փաստագրում դրանք կոորդինատներով, ինչպես նաև ցուցադրում ոսկու պաշարներն, խորությունը ու դրանց պարունակությունները:

Գ. Գևորգյանը նշեց, որ մոտավորապես 37,000 տոննա պղինձ և 5 տոննա ոսկի է կանխատեսվում: Այնուհետև, քարտեզների, նկարների հիման վրա կատարվում է փաստագրում և ֆիքսում տվյալները: Քարտեզի վրա ներկայացվեց նախնական ձևաչափը, ինչպես նաև ոսկու և պղնձի երակների տեղակայումը: Այդ երակների վրա առկա է բուսականություն և անտառներ, իսկ նմուշառումը նախատեսվում է կատարել մակերեսից:

Խաչատուր Անդրեասյանը հարցրեց, թե որքան է խորությունը: Գ. Գևորգյանը պատասխանեց, որ այն կախված է ձգվածությունից և կարող է լինել 300-500 մետր, սակայն հիմնականում նախատեսվում է 200 մետր խորություն: Մակերեսի ուսումնասիրությունների համար նույնպես նախատեսվում են հատուկ աշխատանքներ:

Ապագայում նախատեսվում են ստորգետնյա աշխատանքներ և լրացուցիչ ուսումնասիրություններ՝ տարածքի ռեսուրսների մանրակրկիտ գնահատման համար:

Ապագայում նախատեսվում է կառուցել կապիտալ թունել, որը կունենա մայր թունել և բաժանվող երակներ: Թունելի ներսում կգործեն տրանսպորտային միջոցներ, սակայն հորատման աշխատանքներ նախատեսված չեն:

Հարց հնչեց, թե որքան հեռավորության վրա են նախատեսվում ուսումնասիրման և թունելի աշխատանքները: Պատասխանեցին, որ դրանք նախատեսվում են մոտ 3,5 կմ հեռավորության վրա: Այնուհետև հարց բարձրացվեց՝ արդյոք այդ հատվածներում ընդհանրապես բուսածածկույթ չկա: Պատասխանեցին, որ ամբողջությամբ բացակայելը հնարավոր չէ, սակայն հիմնականում տարածքում աճում են գիհիներ, որոնք չեն դասվում վերացող բուսատեսակների շարքին:

Քննարկման ընթացքում հիմնականում շոշափվեցին բնապահպանական հարցերը: Շեշտվեց, որ առանձնացվող հատվածները պետք է հնարավորինս չընդգրկեն ազգային պարկերի տարածքները, վարելահողերը և այն վայրերը, որտեղ իրականացվում է անասնապահություն:

Քարտեզի վրա ներկայացվեց Շվանիձորի և Նռնաձորի շրջանների մանրամասն նկարագրությունը, որոնց վերաբերյալ պետք է մանրամասն քննարկումներ անցկացվեն համապատասխան մասնագետների կողմից: Կիրականացվեն ուսումնասիրություններ, իսկ այնուհետև կկազմակերպվի երկրորդ հանրային քննարկումը, որոնց ընթացքում կքարձրացվեն առաջարկություններ, որոնք կհամապատասխանեն քննարկման ընթացքին:

Խ. Անդրեասյանը հավելեց, եթե նշված քայլերը մնասակար լինեն Նռնաձորին կամ համայնքին, ապա նախագծի իրականացմանը կարող է տրվել դադարեցման որոշում:
Հանրային քննարկումները հիմնականում վերաբերելու են միայն ուսումնասիրման աշխատանքների, այլ ոչ հանքի բացմանը:

Հանքի բացումը ապագայում կարող է հանգեցնել համայնքի շրջակա միջավայրի վատթարացման, ինչը ենթադրում է, որ համապատասխանաբար համայնքը պետք է ստանա բարելավված բնապահպանական պայմաններ կամ փոխհատուցում: Այսպիսի նախագծեր պահանջում են համապատասխան բնապահպանական միջոցառումների իրականացում, որպեսզի նվազեցվի հնարավոր մնասը և ապահովվի համայնքի բարեկեցությունը:

Բնակիչները հարցրեցին, թե ինչ տվյալներ են պարզվել նախկին ուսումնասիրությունների ժամանակ: Ապա նշվեց, որ այժմ օգտագործվում են նոր տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք ավելի արդյունավետ են ուսումնասիրման համար: Նշվեց նաև, թե ինչ են ստանալու համայնքը և բնակիչները այս գործընթացից: Համայնքի ղեկավարը կարևորեց այս աշխատանքների նշանակությունը, ներկայացրեց ընթացիկ քայլերը, որոնք ներառում են ուսումնասիրությունները, պետության կողմից հարկ վճարումը և Նռնաձորի ներգրավումը:

Օրինակ, «Լիճքվազ» ՓԲԸ-ն աշխատում է փակ հանքային համակարգով, որը չի առաջացնում բնապահպանական լուրջ խնդիրներ, այդ թվում՝ մնաս ջրին: Այս կերպ ընկերությունը ընդունում է պատասխանատվություն շրջակա միջավայրի պահպանման համար, կիրառելով անվտանգ տեխնոլոգիաներ, որոնք թույլ չեն տալիս ջրային ռեսուրսների մնասում:

Հիմնական պահանջն է իրականացնել քննարկումները համապատասխան մասնագետների հետ: Համայնքի ղեկավարը համեմատական քայլ կատարեց՝ օրինակ բերելով Հյուսիս-Հարավ ճանապարհի նախագծի իրականացումը: Նա ընդգծեց, որ պետք է կարողանալ հավասարակշռել բնապահպանական պահանջները և համայնքի տնտեսական զարգացման անհրաժեշտությունը, որպեսզի ապահովվի երկկողմանի շահավետ լուծում:

Մասնակիցները ևս ներկայացրեցին, որ համայնքին և տարածաշրջանին մեծ օգուտներ են բերելու ներդրումները, քանի որ դրանք կնպաստեն տնտեսական զարգացմանը:

Կարևոր է, որ այս աշխատանքները չեն նախատեսում բաց հանքերի ստեղծում կամ պոչամբարների օգտագործում, ինչը նվազեցնում է շրջակա միջավայրի վրա գործելու վնասակար ազդեցությունը: Դրանով ապահովվում է շրջակա բնության պահպանությունը և համայնքի անվտանգությունը:

Խ. Անդրեասյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին արդյունավետ քննարկման համար: Նա նաև նշեց, որ մնացած հարցերը կքննարկվեն 2-րդ հանրային քննարկման ժամանակ, որտեղ կտրամադրվի լրացուցիչ մանրամասներ և հնարավորությունները քննարկելու հնարավորություն:

Հանրային քննարկումների պատասխանատու
Համայնքի ղեկավար՝ Խ.Անդրեասյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ Գ.Գևորգյան

Քննարկումը արձանագրեց՝ Մ.Գրիգորյան